Կենսաբանություն, դպրոցական փուլ
9-րդ դասարան (2025-2026թթ)

Տևողությունը՝ 60 րոպե

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Ստորև բերված է կենդանի օրգանիզմի միկրոլուսանկար: Ո՞ր կարգաբանական խմբին է այն պատկանում

   1) Բակտերիա
   2) Արքեյ
   3) Պրոտիստ
   4) Միաբջիջ ջրիմուռ

2. Նշվածներից ո՞ր հյուսվածքում է կարելի հայտնաբերել բջիջներ, որոնք կարող են կատարել ֆոտոսինթեզ:
   1) Քսիլեմ
   2) Ֆլոեմ
   3) Էպիդերմիս
   4) Սկլերենքիմ

3. Ստորև բերված է լուսանկար: Ի՞նչ բջիջներ են զարգանում բերված տերևի ստորին մակերեսի վրա:

   1) Զոոսպորներ 3) Սպորներ
   2) Գամետներ 4) Նախածիլ

4. Ի տարբերություն մերկասերմերի, ծածկասերմ բույսերը
   1) Զարգացնում են ցողուն, տերև և արմատ
   2) Ունեն հապլոիդ էնդոսպերմ
   3) Սերմերը զարգացնում են կոների վրա
   4) Ձևավորում են պտուղներ

5. Լեյկոպլաստներում իրականացվում է
   1) ԱԵՖ-ի սինթեզ
   2) Գլիկոգենի սինթեզ
   3) Թաղանթանյութի սինթեզ
   4) Օսլայի սինթեզ

6. Ինչպե՞ս է կոչվում կենսաբանության այն ճյուղը, որը դասակարգում է կենդանի օրգանիզմները:
   1) Էկոլոգիա
   2) Տաքսոնոմիա
   3) Էթոլոգիա
   4) Կենսաքիմիա

7. Ողնաշարավորների ո՞ր դասին է բնորոշ ստորև պատկերված գլխուղեղը:

1) Ձկներ
2) Սողուններ
3) Թռչուններ
4) Կաթնասուններ

8. Քանի՞ պարանոցային ող ունի ընձուղտը:
1) 7
2) 9
3) 12
4) 15

9. Նշվածներից ո՞րն է պատկանում երկկողմ համաչափ կենդանիների (Clade Bilateria) խմբին:
1) Սպունգները
2) Սցիֆոիդները
3) Ծովային աստղերը
4) Կորալյան պոլիպները

10. Ստորև բերված է լուսանկար: Ընտրեք այն օրգանը, որը հատուկ է այդ օրգանիզմի տիպի բոլոր առանձնյակներին:



1) Թոքեր 2) Խռիկներ 3) Թիկնոց 4) Աչքեր

11. Ստորև բերված է կաթնասունի օրգանի նկար: Ի՞նչ կառույց է հնարավոր հայտնաբերել, երբ այդ օրգանից պատրաստված պատրաստուկը դիտեք մանրադիտակի տակ:

1) Նեֆրոն 2) Նեյրոն 3) Քորիոն 4) Ամնիոն

12. Ո՞ր էկոհամակարգի բնակիչներին է բնորոշ նեֆրոններում երկար Հենլիի կանթերի առկայությունը:
1) Անապատային
2) Տրոպիկական
3) Տայգա
4) Տունդրա

13. Ո՞ր տիպի օրգանիզմին է պատկանում ստորև պատկերված կմախքը:

1) Ոսկրային ձուկ
2) Սողուն
3) Կաթնասուն
4) Կոճիկային ձուկ

14. Ո՞ր մակրոմոլեկուլի կազմում է ամենից հաճախ հանդիպում նկարում պատկերված միացությունը:



1) Սպիտակուց
2) Ճարպ
3) ՌՆԹ
4) Գլիկոգեն

15. Նշվածներից որո՞նք են միկրոսկոպիկ միաթաղանթ օրգանոիդներ՝ կազմված հարթ պարկիկներից, որոնց ծայրերից մանր պղպջակներ են պոկվում.

1) Գոլջիի համակարգ
2) Միտոքոնդրիումներ
3) Լիզոսոմներ
4) Ռիբոսոմներ

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Որքա՞ն է սրտի կծկումների թիվը 1 րոպեում, եթե սրտի բոլորաշրջանը կազմում է 0.6 վրկ:
17. Դարչնագույն աչքերը դոմինանտ են կապույտ աչքերի նկատմամբ: Ի՞նչ հավանականությամբ երեխան կունենա կապույտ աչքեր, եթե երկու ծնողներն էլ հետերոզիգոտ են: Պատասխանը ներկայացնել տոկոսներով:
18. Ենթադրենք ունենք բակտերիայի մի տեսակ, որի բջիջը կիսվում է 1 ժամը մեկ: Եթե լուծույթում այս պահին ունենք 100 բակտերիա, ապա 3 ժամ անց քանի՞ բակտերիա կլինի այնտեղ:
19. Ենթադրենք մարդը ունի 5 լիտր արյուն: Արյան պլազման կազմում է արյան ծավալի 55%-ը: Քանի՞ լիտր արյան պլազմա ունի մարդը: Պատասխանը բազմապատկել 100-ով:
20. Քանի՞ սպերմիում է մասնակցում մամուռների մոտ բեղմնավորման գործընթացին: